

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
Արարատի և Վայոց Ձորի մարզային բաժին Մասիսի բաժանմունք**

ք. Մասիս, 0801, Արարատյան 3, թիվ 4, հեռ. 060713510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

17.11.2021թ.

ք. Մասիս

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արարատի և Վայոց Ձորի մարզային բաժնի հարկադիր կատարող՝ արդարադատության ավագ լեյտենանտ Ա.Մարկարյանս, ուսումնասիրելով թիվ 06017438 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 23.03.2020թ. տրված թիվ ԱՎԴ2/1554/02/18 կատարողական թերթի համաձայն պետք է Արման Արմենի Մնացականյանից հոգուտ <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ի բռնագանձել 151.593 << դրամ և հաշվեգրվելիք տոկոսներ՝ բռնագանձումը տարածելով գրավադրված գույքի վրա:

Պարտապանից պետք է բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի 5 տոկոսը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» << օրենքի 28, 28.1, 43 և «Հրապարակային սակարկությունների մասին» << օրենքի 35.1-35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան Ավետիս Մովսեսյան Սերյոժայի կողմից գրավադրված ներքոհիշյալ ոսկյա զարդերը

h/h	գույքի անվանումը և նկարագիրը	քանակը	միավորի գնահատման գինը	միավորի մեկնարկային գինը
1	Շղթա 560 հարգ, 9.8գր.	1 հատ	153.860 << դրամ	115.395 << դրամ

Ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ <http://harkadir.ajurd.am> կամ www.ajurd.am միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 07.01.2022թ.

Որոշումն ուղարկել կողմերին:

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադատության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում: